

75 Յետ այնորիկ Սարգիս բաբուն
 Ի վէնէտկոյ բերէր յիւր տուն
 Ըզտրպարան, ըզտառս համբուն
 Առ ի տրպել անդ գիրս բազմարդիւն :

76 Իսկ այն ինչ անդ ոչ յաջողէր .
 Ջի տրպել տալ Յակոբ կամէր ,
 Ջայնպիսի գիրս որ վայել չէր ,
 Արգելեալ զայն որ շատ հարկն էր :

77 Ապա տեսեալ Սարգսի մեր զայն
 Արգելն անկարծ տրպագրութեան ,
 Առ օգուտ գոլ իւրոց համայն
 Յար քարողէր ի ժամատան :

78 Արչափ վըտանդ բարուր եւ վիշտ
 Նիւթէր նըմա այսն ամբարիշտ ,
 Այնչափ նա ժիր գոյանայր միշտ
 Առ զիսկն ասել չեղեալ ծոյլ ճիշտ :

79 Ջի ներհակաց ձայն, երգ, տաւիղ
 Ար նուագիւր յաղօտ բաւիղ
 Չազդէր ի նա փոխել շաւիղ ,
 Յոր իսկութեան գոյր շառաւիղ :

80 Այսպէս զամս ինչ կենցաղ վարեալ ,
 Այց առնելով մօր իւր սիրեալ ,
 Եւ կենակցեալ ընդ արս ընտրեալ ,
 Շըրջէր նա անդ գովեալ յարգեալ :

81 Յետոյ Սարգսի կողմն օր քան զօր
 Շահմամբ սրբտից հանապազօր
 Աճեալ յորգեալ լինէր հրգօր ,
 Ընդգէմ որոյ չիշխէր այլ զօր :